ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԳԵՎՈՐԳ ՎՐԴ. ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ՝ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՂԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԻՐԱԽՆԱՄ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին շէն ու պայծառ գործում են հայոց եկեղեցիները թէ՛ մեր մայր երկրում՝ Հայաստանում, թէ՛ մեր հարևան եղբայրական երկրներում, այդ թվում նաև՝ հինաւուրց բարեկամ Վրաստանում:

Վրահայոց պատմական թեմը, իբրև կենտրոն ունենալով Վրաստանի բաղաքամայր Թբիլիսին, դարեր շարունակ միշտ եղել է հոգևոր մխիթարութեան աղբիւր մեր հաւատացեալ ժողովրդի համար, ու նաև մի կենդանի գործօն՝ վրաց և հայ եկեղեցիների ու ժողովուրդների անսասան բարեկամութեան ու հարազատ եղբայրութեան:

Մենք, իբրև Հայոց Հայրապետ, նուիրական պարտք ենք համարում աղօթել ու գործել նոյն այս ոգով և ջանք չխնայել որպէսզի Վրաստանի մեր թեմը իր բոլոր եկեղեցիներով և հոգևոր սպասաւորներով ուղիղ ընթանայ իր պատմական առաքելութեան ճանապարհով:

Այս ոգով ու իղձերով տոգորուած, և ջերմապէս գնահատելով ձեզ իբրև հաւատաւոր, առաքինի ու նուիրեալ հոգևոր սպասաւոր սուրբ եկեղեցւոյ, այսու Մեր կոնդակաւ ձեզ հրաւիրում ենք ստանձնելու վրահայոց թեմի առաջնորդական տեղապահութեան պաշտօնը սկսեալ 1 հոկտեմբեր 1972 թուից:

Վստահ ենք թէ ձեզ յատուկ շնորհներով, դուք յաջողութեամբ պիտի վարէք այս պատասխանատու պաշտօնը՝ ներդաշնակօրէն գործակցելով վրահայոց եկեղեցիների գործադիր վարչական մարմինների և հոգևոր սպասաւորների հետ, Վրաստանի բարեխնամ պետական իշխանութեանց հանդէպ յարգալիր ու օրինապահ վերաբերմունքով:

Պատուէր ենք տալիս նաև ձեզ որ սիրով և ջերմութեամբ մօտենաք վրահայ հաւատացեալ ժողովրդին, բոլորին հաւասարապէս բաշխելով հոգւոյ մխիթարութիւն, խաղաղութիւն և օրհնութիւն:

Մաղթում ենք ձեզ աշխատանքի անսպառ եռանդ ու երկնառաք ներշնչումներ արդիւնաշատ շինարար գործունէութեամբ:

Թող Աստուած իր լուսոյ փառքի մէջ պահի պահպանի վրահայոց թեմն ու եկեղեցիները:

Թող Աստուած միշտ խաղաղ ու միշտ երջանիկ պահի ծաղկեալ աշխարհը Վրաստանի, համայն իր ազգիւ ժողովրդով:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

ԾԱՏՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ը սեպտեմբերի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 785